

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«_07_» դեկտեմբերի 2020 թ. թիվ 148 նիստում



ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան Ա. Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ

2020թ. հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքներն ու միջոցառումները.

Իրականացվել է պաշտոնական կայքի (<https://www.isec.am>) սպասարկում, պարբերական թարմացում: Իրականացվել են կայքի բովանդակային թարմացումներ և ավելացումներ:

Թարմացվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում տեղադրված հեռավար ուսուցման հարթակի /սերվեր/ (կայք՝ <https://vle.sci.am/>) ծրագրային ապահովումները, վերազինվել անհրաժեշտ ծրագրային նոր փաթեթներով:

Հարթակի անվտանգության և անխափան աշխատանքի համար կատարվել են անհրաժեշտ ընթացիկ սպասարկումներ. արխիվացվել են տվյալների բազաները, սերվերային համակարգը, կատարվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլն:

Թարմացվել է հեռակոնֆերանսների կազմակերպման համար նախատեսված սերվերը, նորացվել են անվտանգության և ծրագրային անհրաժեշտ փաթեթները: Համավարակով պայմանավորված դասընթացներն

առցանց կազմակերպելու համար միաժամանակյա օգտագործման համար գործարկվել են հեռակոնֆերանսների ևս 2 սերվեր:

Համավարակի հրամայականով պայմանավորված գրեթե 2 կիսամյակ ուսումնական գործընթացը կազմակերպվել է ԳԿՄԿ հեռավար հարթակում՝ լիարժեք ապահովելով Կենտրոնի բնականոն ուսումնական պրոցեսը: Հեռավար ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով նաև 8 աշխատակցի համապատասխան կարգաբերումներով տրամադրվել են դյուրակիր համակարգիչներ:

Մշակվել են հեռաուսուցման հարթակ մուտք գործելու և օգտվելու ուղեցույցներ և տեսաուղեցույցներ:

Պարբերաբար կազմակերպվել են տեսականություններ (ուղիղ միացումներ) գործընկեր կազմակերպությունների հետ:

Իրականացվել է համատեղ օգտագործման հեռաուսուցման սերվերի ընթացիկ սպասարկում և թարմացում (<https://online.isec.am/>): Բաժնի կողմից տրամադրվել է անհրաժեշտ տեխնիկական խորհրդատվություն դասախոսներին և ուսանողներին՝ հեռավար հարթակից օգտվելու վերաբերյալ:

Թարմացվել է պահոցային համակարգի ծրագրային ապահովումը (ASUSTOR):

Կատարվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատանքային համակարգիչների պրոֆիլակտիկ ստուգումներ, առաջացած ծրագրային խնդիրների վերացում, ցանցային և համալրող սարքավորումների (տպիչներ, սկաներներ և այլն) վերանորոգում ու կարգաբերում և տարվել այլ խնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքներ, աշխատակիցներին ցուցաբերվել է տեխնիկական և մասնագիտական աջակցություն: Բացվել և տրամադրվել են աշխատանքային, ուսանողական փոստային հաշիվներ ողջ դասախոսական կազմին և ուսանողներին:

Ձեռք բերված 3 նոր համակարգիչները և 2 բազմաֆունկցիոնալ տպիչները բերվել են աշխատանքային վիճակի՝ լիարժեք կերպով տրամադրվել աշխատակիցներին շահագործման:

Իրականացվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ լսարանային համակարգիչների ծրագրային փաթեթների թարմացումներ, ինչպես նաև հակավիրուսային ծրագրերի թարմացումներ և ստուգումներ:

Մեկ լսարան վերածնափոխվել է համակարգչային լսարանի՝ 17 համակարգչով: Իրականացվել են տեսահսկման և անվտանգության համակարգերի ընթացիկ սպասարկման աշխատանքներ, ավտոմատ անցագրային համակարգի շահագործման ապահովում և սպասարկում:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ սերվերների անվտանգ, հուսալի և անխափան աշխատանքի համար կատարվել են համապատասխան ծրագրային փաթեթների տեղադրում և նորացում, սերվերների պարբերաբար ռեզերվային արխիվների ստեղծում:

Իրականացվել են Կենտրոնի էլեկտրոնային ներքին կառավարման նոր համակարգի նախագծման աշխատանքներ, ծրագրավորվել են որոշ մոդուլներ:

Կատարվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ լոկալ ցանցի արդիականացման, ընդլայնման և սպասարկման աշխատանքներ՝

- ավելացվել են ցանցային նոր կապուղիներ,
- թարմացվել են ցանցային մոնիթորինգի ծրագրային փաթեթները:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի հետ համատեղ մշակվել և առցանց տեղադրվել են էլեկտրոնային հարցաշարեր և իրականացվել են էլեկտրոնային հարցումների կազմակերպման աշխատանքներ ուսանողների շրջանում:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տեղեկատվական տեխնոլոգիաների

բաժնի պետ



Ա. Եղոյան

25.11.2020